ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2014 թվականի թիվ 13/18

քաղ. Սոչի

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի ԹԻՎ 560 ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴՄԾ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Ի գիտություն ընդունել այն ապրանքների ծավալների վերաբաշխման բացահայտված միտումների վերաբերյալ Ռուսաստանի ԴՄԾ-ի տեղեկատվությունը, որոնց նկատմամբ Մաքսային միության անդամ պետություններում կիրառվում են Ռուսաստանի Դաշնության նախագահի 2014 թվականի օգոստոսի 6-ի թիվ 560 հրամանագրով սահմանված հատուկ տնտեսական միջոցները (այսուհետ՝ առանձին կատեգորիայի ապրանքներ) և Ռուսաստանի Դաշնություն առանձին կատեգորիայի ապրանքների ներմուծումը չթույլատրելու հետ կապված ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում Ռուսաստանի ԴՄԾ–ի կողմից ձեռնարկվող միջոցների մասին:

2. Ռուսաստանի ԴՄԾ-ին (ՌԿևՕՀ, Վ. Ի.Գոլոսկոկով)՝ ապահովել ամսական առնվազն երկու անգամ հաճախականությամբ (հատուկ տնտեսական միջոցների գործողության ժամկետի ընթացքում) Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին և Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին Ռուսաստանի Դաշնություն առանձին կատեգորիայի ապրանքների ներմուծումը չթույլատրելու հետ կապված ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում ձեռնարկվող միջոցների վերաբերյալ տեղեկատվության ուղարկումը:

3. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին՝ շարունակել Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության տարածքով Ռուսաստանի Դաշնություն առանձին կատեգորիայի ապրանքների տարանցումը չթույլատրելուն ուղղված աշխատանքները:

4. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ռուսաստանի ԴՄԾ-ին՝ ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում նվազեցնել մաքսային հսկողությունը առանձին կատեգորիայի այն ապրանքների նկատմամբ, որոնք տեղափոխվում են Ռուսաստանի Դաշնության տարածքով և նախատեսված են Ղազախստանի Հանրապետությունում ներքին սպառման համար այն դեպքում, երբ նման փոխադրումն իրականացվում է այն փոխադրողների կողմից, որոնց ցանկը սահմանվում է Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի կողմից, ղազախստանյան այն ստացողների հասցեին, որոնց ցանկը նույնպես սահմանվում է Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի կողմից:

5. Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին՝ ապահովել՝

– ապրանքների բարեխիղճ փոխադրողների և ստացողների ցանկերի ուղարկումը Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին և Ռուսաստանի ԴՄԾ-ին՝ սույն Որոշման 4–րդ կետի իրականացման նպատակով, ինչպես նաև տվյալ ցանկերում կատարվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին և Ռուսաստանի ԴՄԾ-ին.

– Ղազախստանի Հանրապետության ներքին սպառման առանձին կատեգորիայի

ապրանքների նպատակային օգտագործման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև անցկացվող հսկողական միջոցառումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը Ռուսաստանի ԴՄԾ-ին:

Նախագահ՝ Ա. Յու. Բելյանինով

Նախագահի տեղակալ՝ Դ. Ե. Երգոժին

Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի նախագահի տեղակալ, Միավորված կոլեգիայի անդամ՝ Ս. Վ. Բորիսյուկ